

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ Համայն Ռուսիոյ, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլեանդիայի և այլն և այլն և այլն։

Յայտարարում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին։

Ռուսիոյ պետութիւնը ստեղծուել է Թագաւորի ու ժողովրդի և ժողովրդի ու Թագաւորի անքակտելի ամուր միութեամբ։ Թագաւորի և ժողովրդի համաձայնութիւնն ու միութիւնը բարոյական այն մեծ զօրութիւնն է, որից ստեղծուել է Ռուսիան դարերի ընթացքում, որը պաշտպանել է նրան ամեն տեսակ աղէտներից ու պատահարներից և Թագաւորը հանդիսանում է իբրև գրաւական նրա միութեան, անկախութեան և ամրողջութեան, նիւթական բարօրութեան և հոգեկան զարգացման ներկայում և ապագայում։ 1903 թուի փետրուարի 26-ին տուած հրովարտակով հայրենիքի բոլոր հաւատարիմ զաւակներին կոչում

էինք սերտօրէն միանալ կատարելագործելու պետական կարգը, ամուր կազմ սահմանելով տեղական կեանքի մէջ, և այն ժամանակ Մեր մտահոգութիւնն այն էր, որ ընտրողական հասարակական հաստատութիւնները համաձայնեցնենք կառավարչական իշխանութիւնների հետ և արմատախիլ անենք նրանց միջև եղած պառակտումը, որն այնքան կործանիչ ազդեցութիւն ունի պետական կեանքի կանոնաւոր ընթացքի վրայ։ Այս մասին չեն դադարել մտածել Ինքնակալ թագաւորները, Մեր նախորդները։

Այժմ հասել է ժամանակը, հետևելով նրանց բարի ձեռներէցութեան, կանչել ընտրեալ մարդիկ ամբողջ Ռուսաստանից, որ մշտնջենապէս և գործնականապէս մասնակցեն օրէնքների կազմութեան, այս բանի համար մտցնելով պետական բարձր հաստատութիւնների կազմի մէջ մի առանձին օրէնսդրական հաստատութիւն, որին իրաւունք է տրւում մշակելու և քննադատելու օրինագծերը և քննելու պետական ելևմտացոյցերը։

Այս նկատումներով, անխախտ պահպանելով Ռուսական կայսրութեան հիմնական օրէնքը Ինքնակալ իշխանութեան էութեան մասին, Մենք բարւոք համարեցինք հիմնել պետական դումա և կանոնադրութիւն հաստատեցինք դումայի ընտրութիւններին վերաբերեալ, տարածելով սոյն օրէնքների զօրութիւնը ամբողջ կայսրութեան վրայ, այն փոփոխութիւններով միայն, որոնք հարկաւոր կը դատուեն առանձին

պայմանների մէջ գտնուող նրա մի քանի ծայրերի համար, Ֆինլեանդիայի Մեծ Իշխանութեան ընտրեալների պետական դումայում ունենալիք մասնակցութեան կարգի մասին, կայսրութեան համար ընդհանուր և այդ երկրի օրէնսդրութեանց խնդիրների վերաբերմամբ, Մենք ցուցումներ կը տանք առանձին:

Ընդ ամին Մենք հրամայեցինք ներքին գործերի մինիստրին անյապաղ կանոններ ներկայացնել Մեզ ի հաստատութիւն պետական դումայի ընտրութիւնների կանոնադրութիւնը գործադրելու մասին այնպէս, որ 50 նահանգներից և Դոնի Օրքի շրջանից ընտրուած անդամները կարող լինին դումա գալ 1906 թուի յունուարի կէսից ոչ ուշ:

Մենք Մեզ ենք վերապահում ամբողջովին պետական դումայի հաստատութեան յետագայ կատարելագործութեան հոգացողութիւնը, և երբ կեանքն ինքը ցոյց կը տայ նրա հաստատութեան մէջ այն փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը, որոնք կարող են կատարելապէս գոհացում տալ ժամանակի պահանջներին և պետական բարօրութեան, չենք յապաղիլ այս մասին պատշաճաւոր ցուցումները տալ իր ժամանակին: Հաւատացած ենք, որ ամբողջ բնակչութեան վստահութեամբ ընտրուած մարդիկ, որոնք այժմ կանչւում են մասնակցելու կառավարութեան հետ միասին օրէնսդրական աշխատանքին, ցոյց կըտան ամբողջ Ռուսիային, որ իրենք արժանի են Թագաւորի այն վստա-

հութեան, որով նրանք կանչուում են սոյն մեծ գործին մասնակցելու, և կատարելապէս համերաշխ պետական միւս հաստատութիւնների և Մեզնից նշանակուած իշխանութիւնների հետ, օգտակար աջակցութիւն ցոյց կը տան Մեզ ի բարօրութիւն ընդհանուր մայր-Ռուսիայի հաստատելու պետութեան միութիւնը, ապահովութիւնն ու վեհութիւնը և ժողովրդական կարգն ու բարօրութիւնը:

Աստուծոյ օրհնութիւնը հայցելով Մեր ձեռքով հիմնուող պետական հաստատութեան աշխատանքների վրայ, Մենք, անսասան հաւատով առ Աստուծոյ ողորմութիւնն և առ պատմական այն անշեղ վիճակը, որ որոշել է Աստուածային նախախնամութիւնը Մեր թանկագին հայրենիքի համար, հաստատապէս հաւատում ենք, որ ամենակարող Աստուծոյ օգնութեամբ և իր բոլոր զաւակների միահամուռ ջանքերով Ռուսիան դուրս կը գայ յաղթական ներկայումս իրեն հասած ծանր փորձանքներից և կը վերածնուի իր հազարամեայ պատմութեամբ դրոշմուած հզօրութեան, վեհութեան և փառքի մէջ:

Տրուած է Պետերհոֆում օգոստոսի 6-ին, Քրիստոսի Ծննդեան հազար ինն հարիւր հինգերորդ, իսկ Մեր թագաւորութեան տասն և մէկերորդ տարին:

Իսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան Սեպհական ձեռքով ստորագրուած է՝ ՆԻԿՈԼԱՈՍ: